Զ Ե Կ ՈՒ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԱԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒ-ԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

<19> Հունվարի 2015թ. ք.Գյումրի

Շիրակի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը իր առջև դրված խնդիրների իրականացման համար, ղեկավարվելով ՀՀ համապատասխան օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, ինչպես նաև արտակարգ իրավիճակների նախարարության ու պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության հրամաններով ու ցուցումներով 2014թ. բավական աշխատանքեր է կատարել քաղաքացիների կյանքը, առողջությունը, գույքը, ինչպես նաև նյութական ու մշակութային արժեքները հրդեհներից պահպանելու համար: Բնականաբար այդ աշխատանքների հիմնական ծավալը կազմել են հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ հսկողություն սահմանելը, հակահրդեհային քարոզչությունը, ինչպես նաև արձանագրված ու հաշվառման ենթակա հրդեհներով հետաքննությունը:

Հաշվի առնելով, որ գործունեության նշված այս ուղղություններն են հիմնականում ներազդում տարածքի հրդեհային իրավիճակի վրա, ուստի անդրադառնանք դրանց:

Հրդեհները, դրանց հետևանքները, հաշվառումը և իրականացվող հետաքննությունը

2014թ. ընթացքում Շիրակի մարզում արձանագրվել է 203 հրդեհի դեպքեր, 86.841.496 դրամ նյութական վնասով, որը նախնական է: Հրդեհներից նախնական զոհվել են 4 և տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել 6 քաղաքացիներ: Արձանագրվել է 11 խոշոր հրդեհ, որոնցից պատճառված նյութական վնասը կազմել է 63.025.000 դրամ:

Արձանագրված հրդեհներից 5-ով հարուցվել է քր. գործ, 44-ով (39/5) կայացվել են որոշումներ քր. գործի հարուցումը մերժելու մասին՝ ոստիկանության և տեսչության կողմից, 153-ը ավարտվել են եզրակացությամբ և 1-ը գտնվում է ընթացքի մեջ:

2013թ. արձանագրվել են 168 հրդեհի դեպքեր, որոնցից պատճառված նյութական վնասը կազմել է 43.104.778 դրամ: Հրդեհներից զոհվել է 5 և տարբեր աստիճանների վնասվածքներ են ստացել 4 քաղաքացիներ: Արձանագրվել է 4 խոշոր և առավել խոշոր հրդեհներ:

Այսպիսով 2013թ. հետ համեմատած հրդեհների քանակը աճել է 35-ով կամ 20.8 տոկոսով, պատճառված նյութական վնասը նախնական աճել է 43.736.718 դրամով կամ 101,2 տոկոսով, զոհերի քանակը նախնական նվազել է 1-ով վնասվածք ստացողների քանակը ավելացել է 2-ով, խոշոր և առավել խոշոր հրդեհների քանակը ավելացել է 7-ով:

Հրդեհները ըստ տարածաշրջանի ունի հետևյալ տեսքը.

Աղյուսակ 1

Հ-Հ	Տարածք	Հրդեհների քանակը		Աճ. Նվ. + -	Նյութական վնասը/դրամով/		Աճ. Նվազում + -	Զոհեր, վիրավորներ		Աճ. Նվ. + -
		14թ.	13թ.		2014թ.	2013թ.		14թ.	13թ.	
1.	Գյումրի	116	77	+39	50.006.996	13.583.588	+36.423.408	3/1	4/2	-1/-1
2.	Արթիկ	20	37	-17	15.011.000	2.602.190	+12.408.810	0*/3	1/0	-1*/+3
3.	Անի	11	12	-1	7.505.000	8.850.000	-1.345.000	0/0	0/0	0/0
4.	Ախուրյան	40	31	+9	8.129.000*	8.685.000	-556.000*	1*/2	0/0	+1*/+2
5.	Աշոցք	9	7	+2	326.000	6.584.000	-6.258.000	0/0	0/1	0/-1
6.	Ամասիա	7	4	+3	5.863.000	2.800.000	+3.063.000	1/0	0/1	+1/-1
7.	Շիրակի մարզ	203	168	+35	86.841.496*	43.104.778	+43.736.718*	5*/6	5/4	0*/+2

Հրդեհների աճ է արձանագրվել Գյումրիում (+39), Ախուրյանում (+9), Աշոցքում (+2) և Ամասիայում (+3) տարածաշրջաններում, իսկ Արթիկի և Անիի տարածաշրջաններում նվազել է համապատասխանաբար 17 և 1 դեպքերով

Հրդեհները ըստ առաջացման տեղերի

Աղյուսակ 2

Հ-Հ	Հրդեհների առաջացման օբյեկտը	Հրդեհների քանակը		Աճ Նվզ. + -	Նյութական վնասը /դրամով/		Աճ Նվզ. + -
		2014թ.	2013թ.		2014թ.	2013թ.	
1	2	3	4	5	6	7	8
1.	Բնակելի զանգված	92	79	+13	56.151.296	31.176.078	+24.975.218
	այդ թվում						
	ա) բնակելի տուն (շենք)	10	9	+1	486.800	2.794.078	-2.307.278
	բ) առանձնատուն	25	24	+1	39.120.000	15.254.000	+23.866.000
	գ) բնակելի տնակ	11	7	+4	2.707.000	2.435.000	+272.000
	դ) օժանդակ կառույց	22	18	+4	5.588.000	3.103.000	+2.485.000
	ե) այլ	24	21	+3	8.249.496	7.590.000	+659.496

1	2	3	4	5	6	7	8
2.	Ոչ բնակելի մասնավոր օբյեկտ	12	17	-5	13.344.200*	1.657.690	11.686.510*
	ա) առևտրի	1	2	-1	13.100.000	3.500	+13.096.500
	բ) այլ	11	15	-4	244.200*	1.654.190	-1.409.990*
3.	Գյուղ. նշանակության օբյեկտ այդ թվում՝	6	13	-7	696.000	2.710.000	-2.014.000
	ա) դաշտ	2	6	-4	71.000	45.000	+26.000
	բ) խոտի դեզ	0	3	-3	0	2.225.000	-2.225.000
	գ) այլ	4	4	0	625.000	4.400.000	-3.775.000
4.	Ավտոմեքենա	14	10	+4	15.363.000*	7.205.000	+8.158.000*
5.	Ուսումնական հաստատություն	4	0	+4	1.168.000	0	+1.168.000
6.	Ամայի տարածք	53	40	+13	0	60.000	-60.000
7.	Այլ նշանակության օբյեկտներ	22	9	+13	119.000	296.000	-177.000
	Ընդամենը	203	168	+35	86.841.496*	43.104.778	+43.736.718*

Տեղի ունեցած հրդեհներից 92-ը կամ 45, 3 տոկոսը առաջացել է բնակելի զնագվածում, 53 կամ 26,1 տոկոսը ամայի տարածքներում

Հրդեհները ըստ առաջացման պատճառների Աղյուսակ 3

Հ-Հ	Հրդեհների առաջացման պատճառը	Հրդեհների քանակը		Աճ, նվ. + -	Նյութական վնասի գումարը /դրամով/		Աճ, նվազ. + -
		2014թ.	2013թ.		2014թ.	2013թ.	
1	2	3	4	5	6	7	8
1.	Հրկիզում	2	3	-1	4.795.000	5.690.000	-895.000
2.	Երեխայի խաղը կրակի հետ	19	16	+3	2.979.000	3.745.000	-766.000
3.	Կրակի հետ անզգույշ վարմունք այդ թվում	87	89	-2	3.516.000	8.041.800	-4.525.800
	ա) անզգուշություն ծխելուց	17	24	-7	50.000	2.598.800	-2.548.800
	բ) հսկողությունից դուրս գտնվող բաց կրակ	56	59	-3	3.458.00	5.413.000	-1.955.000
	գ) ՀԱԿ խախտում բաց կրակով աշխատանքներ կատարելիս	1	1	0	0	0	0
	դ) այլ	13	5	+8	8.000	30.000	-22.000
4.	Կենցաղային վառարանների տեղադրման և շահագործման կանոնների խախտում	14	6	+8	11.206.000	1.550.000	+9.656.000
5.	Էլեկտրահաղորդման գծերի, կենցաղային էլ.սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտում	13	22	-9	27.202.000	14.859.088	+12.342.912
6.	Գազով, նավթամթերքով գործող կենցաղային սարքավորումների շահագործման կանոնների խախտում	1	1	0	0	4.000	-4.000

1	2	3	4	5	6	7	8
7.	Ինքայրում	3	4	-1	6.035.000	1.735.000	+4.300.000
8.	Ամպրոպային լիցքեր	3	1	+2	301.000	0	+301.000
9.	Էլ. եռակցման աշխատանքներ հրդեհային անվտանգության կանոնների խախտմամբ	1	4	-3	26.500	659.500	-633.000
10.	Այլ պատճառներ	55	22	+33	30.780.996*	6.820.000	+23.960.996*
11.	Պարզված չէ	5	0	+5	0*	0	0*
	Ընդամենը	203	168	+35	86.841.496*	43.104.778	+43.736.718

Աղյուսակ 4

Հ-Հ	Ամիսներ	Հրդեհների քանակը		Աճ Նվազ + / -	Նյութական վնասը դրամով		Աճ Նվազ + / -
		2014թ.	2013թ.		2014թ.	2013թ.	
1	2	3	4	5	6	7	8
1.	Հունվար	5	14	-9	0	4.328.000	-4.328.000
2.	Փետրվար	8	1	+7	506.000	1.200.000	-694.000
3.	Մարտ	32	9	+23	3.906.000	3.915.000	-9.000
	Առաջին եռամսյակ	45	24	+21	4.412.000	9.443.000	-5.031.000
4.	Ապրիլ	10	8	+2	3.228.000	3.563.778	-335.788
5.	Մայիս	4	10	-6	4.472.000	6.039.300	-1.567.000
6.	Հունիս	7	3	+4	8.077.500	96.000	+7.981.500
	Առաջին կիսամյակ	66	45	+21	20.189.000	19.142.088	-1.047.412
7.	Հուլիս	18	11	+7	736.000	2.234.000	-1.498.000
8.	Օգոստոս	53	33	+20	6.076.000	6.919.690	-843.690
9.	Սեպտեմբեր	34	39	-5	27.577.000	710.000	+26.867.000
	Ինն ամիսներ	171	128	+43	54.578.500	29.005.778	+25.572.722
10.	Հոկտեմբեր	11	15	-4	7.181.500	3.635.000	+3.546.500
11.	Նոյեմբեր	14	13	+1	20.677.000*	1.052.000	+19.625.000*
12.	Դեկտեմբեր	7	12	-5	4.404.496*	9.412.000	-5.007.504*
	Տարի	203	168	+35	86.841.496*	43.104.778	+43.736.718*

Հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ հսկողության իրականացումը և հակահրդեհային քարոզչությունը

Մարզում հաշվառված են 5234 օբյեկտներ: Շիրակի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության աշխատակիցների կողմից 2014թ. իրականացվել է թվով 24 օբյեկտների ստուգումներ: Ստուգված օբյեկտների ղեկավարներին

տրվել են կարգադրագրեր հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման ուղղությամբ գոյություն ունեցող բացթողումների վերացման համար:

Հրդեհատեխնիկական հետազոտությունների ընթացքում և հրդեհների դեպքերով իրականացված հետաքննությամբ արձանագրվել են հրդեհային անվտանգության կանոնների 123 խախտումներ, որոնց կապակցությամբ կայացվել են վարչական տույժ տալու վերաբերյալ 31 որոշումներ՝ տուգանքի ձևով 1.330.000 դրամի չափով, իսկ 92-ով վարչական վարույթը կարճվել է և ուղարկվել աշխատանքային հանրույթի քննարկմանը:

Գանձվել է 1.305.000 դրամ, որից 75.000 դրամը 2013թ-ից և 2 վարչական գործ 100.000 դրամի չափով գտնվում են ԴԱՀԿ ծառայությունում:

Հաշվառված են 216 նորակառույցներ, որոնցից նոր կառուցվողներ-125, վերակառուցվողներ- 25, վերապրոֆիլավորվողներ-10, իսկ 56-ը գտնվում են սառեցված վիճակում: Հաշվետու ժամանակաշրջանում հաշվառվել են 13 նորակառույցներ:

Հրդեհազդարարող ինքնաշխատ համակարգով կահավորել են 37 օբյեկտներ:

ՍՕՍ սիստեմի համակարգին է միացվել 34 օբյեկտներ:

Ստուգվել է 227 արտադրական վտանգավոր օբյեկտների փաստաթղթեր, 1-ի վերաբերյալ կազմվել են վարչական իրավախախտման արձանագրություններ և ուղարկվել գլխավոր պետական տեսուչին:

Նկատի ունենալով քարոզչական աշխատանքների կարևորությունը հրդեհականխարգելիչ աշխատանքներում տեսչության աշխատակիցների կողմից 2014թ. բավականին դրական աշխատանք է կատարվել.

-տպագրվել են 3 հոդվածներ հիմնականում տեղական թերթերում,

-կազմակերպվել են 19 հեռուստաելույթներ.

-անցկացվել են 101 զրույց-զեկուցումներ և ուղարկվել են 470 գրություններ քաղաքացիներին և պաշտոնատար անձանց:

Ծառայողները և նրանց պատրաստականությունը

2014թ-ին աշխատանքի է ընդունվել մեկ աշխատակից, ներկայումս թափուր է 1 հաստիք (ըստ հաստիքացուցակի 14, համալրված են 13-ը):

Համաձայն եռամյակային պլանների տեսչության ղեկավարության կողմից նախապատրաստվել և անցկացվել են ամսեկան 1 կամ 2 պարապմունք ուղղված աշխատակիցների մասնագիտական գիտելիքների մակարդակի բարձրացմանը:

2014թ-ին տեսչության 5 աշխատակից անցել է ատեստավորում, 4-ը՝ վերապատրաստում

Հետևություններ

Հաշվետու 2014թ-ին Շիրակի մարզում արձանագրված հրդեհների և տեսչության կողմից կատարված աշխատանքների վերլուծության հիման վրա կարելի է համարել, որ իրավիճակը եղել է կայուն ու կառավարելի:

Անցած տարում եղած դրական միտումը պահպանելու, հնարավորինս զարգացնելու համար նպատակահարմար ենք գտնում նախագծել այն միջոցառումների ցանկը, որը մեր կարծիքով կնպաստի դրան՝

- հնարավորինս ակտիվացնել բացատրաքարոզչական աշխատանքները բնակելի զանգվածում, դրանք պլանավորել և անցկացնել սերտ համագործակցելով համատիրությունների, համայնքապետարանների, ինչպես նաև այլ շահագրգիռ ծառայությունների (ոստիկանության) և կազմակերպությունների հետ,
- յուրաքանչյուր բացատրաքարոզչական միջոցառում անցկացնել միայն նախապես լուրջ նախապատրաստվելուց հետո (ինչպես բովանդակության, այնպես էլ անցկացման ձևի),
- բացատրաքարոզչական միջոցառումների ժամանակ հնարավորինս մանրամասն անդրադառնալ հրդեհային անվտանգության կանոններում կատարված փոփոխություններին՝ մեկնաբանել և բացատրել դրանց էությունը,
- օբյեկտներում ստուգումներ անցկացնել միայն համապատասխան օրենքի պահանջների,
- ստուգումների (հրդեհատեխնիկական միջոցառումների) ժամանակ հայտնաբերված ցանկացած հրդեհային անվտանգության կանոնների խախտման փաստին տալ իրական ճիշտ գնահատական, դրա քննարկումը հնարավորինս անցկացնել տվյալ օբյեկտում (աշխատակցի, բնակչի ներկայությամբ),
- եթե սուգման ենթակա օբյեկտը հանդիսանում է արտադրական վտանգավոր կամ եթե դա իհայտ գա ստուգման ընթացքում, ապա պարտադիր անդրադառնալ տեխնիկական անվտանգության հետ կապված հարցերին՝ գրանցված է արդյոք պետական ռեեստրում, անցել է ամենամյա տեխնիկական հետազոտություն, թե ոչ և այլ,
- օբյեկտների ստուգումների ժամանակ առանձնակի ուշադրության կենտրոնում պահել հատկապես հրդեհ ազդարարման ինքնաշխատ և հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման համակարգերի առկայությունը,
- մշտապես ուշադրության կենտրոնում պահել նորակառույցների հայտնաբերման, հարցը,
- մշտապես հսկողության տակ պահել արձանագրված հրդեհներով տարվող հետաքննությունը (օրենքների պահանջների համապատասխան),
- պարբերաբար, հատկապես հաշվետու ժամանակահատվածների արդյունքներով կամ իրադրությունից դուրս գալով, մարզում կամ նրա առանձին տարածքներում ծավալված հրդեհային իրավիճակի համառոտ վերլուծությամբ կամ անհրաժեշտ տեղեկատվությամբ հանդես գալ մամուլով ու հեռուստատեսությամբ,
- շարունակել աշխատանքները անձնակազմի մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ (պարապմունքները), ակտիվացնել գործունեությունը երիտասարդների շրջանում, համակարգում աշխատանքի անցնելու համար,
- գործունեության մեջ խստիվ պահպանել օրինականությունը:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՎԱԳ ՏԵՍՈՒՉ՝ Ս.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ